

ՆՈՐԻՑ ԵՎԵՂԵՑԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՁ

Այժմ հարց է առաջանում. ե՞րբ կա-
րող էր կազմուած լինել հայկական այս
խմբագրութիւնը: Եթէ, ինչպէս մասնա-
գէտներն են⁶² ապացուցում, Ագոթան-
գեղոսի Պատմութեան մեզ հասած խմբա-
գրութիւնը Մեարոյ Մաշտոցի կամ նրա
աշակերտներից մէկի ձեռքով է կատար-
ուած. Ե. զարի առաջին կէտին, ուր
այս խմբագրութիւնը աւելի ուշ է կազ-
մաւորուել՝ Ե. զարի երկրորդ կէտին,
485 թ. յետոյ, առում ենք այդպէս՝ նկատի
ռենհանրով ասորերէն բնագրի մէջ պա-
պանուած վերջին տեղեկութիւնները:
Նախ ծանօթանանք այդ վկայութիւննե-
րին. ահա այդ հատուածը. «297. Չենոն
կայսեր ժամանակ մի բարեպաշտ արեղայ
(abila — արիւն) կար Ամրա անունով: Մի
տեսիլքով նրան առեւ, որ զնա Դա-
րանալիոս (Դարանաղի)⁶³, այն լեւան
վրայ, որն այնտեղ է գտնուում, 298. Այն-
տեղ գտիր այն քաղաքը, ուր լոյսի ճա-
ռագութիւններ կան, հանիր այնտեղից հայ
Դրիգորի մարմինը, այն վերցրու ու առւր
Եկէլիս (Եկեղեցու) գաւառը⁶⁴, նրան թա-

գիր այնտեղ է վրան էլ եկեղեցի կառու-
ցիր: 299. Դրանից յետոյ երբ նա գնաց
այնտեղ ու գտաւ (մարմինը)», այն մեծ
պատուով տեղափոխեց Թորգոսն⁶⁵, և դրա
համար մարդը Հայաստանը շատ ուրա-
խացաւ, և նրան թաղեցին իր որդիներին
կողքին, որոնք այնտեղ էին թաղուած,
և նրանց վրայ մի հոյակապ եկեղեցի կա-
ռուցեցին⁶⁶, Մեր օրագրական Աղբիւրները
Հայ եկեղեցու մասին առաւմտասիրու-
թեան մէջ մանրամասն կանգ ենք առել
այդ հարցերի վրայ և՛ ցոյց տալով թէ
ինչպէս Չենոն կայսեր ժամանակ (477-
491 թթ.) յայտնաբերուած Գրիգոր Լու-
սաւորչի նշխարների գիւղը և այդ առի-
թով կազմակերպուած ասանխմբութիւն-
ները, հանգիստութիւնները, նրա նշխար-
ների տեղափոխումը ու դրանց վրայ հո-
յակապ եկեղեցու կառուցումը և նրան
արպէս Թաղէոս Առաքելի զործի շարու-
նակողի մեծարումը ձգտում էր մարա-
պիդիւ Հայ եկեղեցու աճող հեղինակու-
թիւնը և որպէս առաքելական եկեղեցի,
նրա ունեցած նշանակութիւնը բարձրաց-
նել երկրի ներսում և երկրից դուրս:

Այսպէս, ասորերէն այս համառոտ
բնագրի յայտնաբերումը ոչ միայն նոր
լոյս է սփռում Ագոթանգեղոսի Պատմու-
թեան մեզ հասած հայերէն մի երկրորդ
խմբագրութեան մասին, այլ նաեւ փորա-
տում է մասնագէտների կասկածը և հաս-

⁶² Տես Ա. Տէր-Ղեւոնդեան, «Ագոթանգեղոսի
Արարական Նոր Խմբագրութիւնը», Երևան,
1968, էջ 11:

⁶³ «Բարձր Հայքի 1-ին գաւառը, 3400 քա-
ռակաւոր կրօնէստ տարածութեամբ այն առի-
կենտրոնն էր Ալիւն՝ Եփրատ գետի մէջ ափին,
և նրան կցուած կամայն՝ նոյն գետի ձախ ա-
փին, որտեղ գտնուում էին Արշակունի թագա-
ւորների տոհմական դամբարանները: Արին
նախաքրիստոնէական Հայաստանի կրօնական
կենտրոնն էր: այնտեղ էր գտնուում Արամազդի
մեհեռները: Այս գաւառում էին գտնուում Թոր-
գոս, Մանգալ այլ վայրերը և Սեպուհ լեռը»,
Տես Ա. Տերման, Հայաստանը, էջ 49:

Արշակունիների տոհմական դամբարանը
հանրապետական Դարանաղիում Գրիգոր Լուսա-
ւորչի նշխարների տեղափոխութիւնը պատա-
հական չէր, որովհետեւ մեզ հասած ասորերէն
խմբագրութեան մէջ Գրիգոր Լուսաւորչի «այր»
Անահիդ ներկայացուած է որպէս հայոց Խոս-
րով թագաւորի եղբայրը, այսինքն քրիստո-
նէութիւն ընդունած Տրդատ Գ. Նորկրայրը:
Տես Van Esbroeck, La résumé, p. 294.

⁶⁴ «Բարձր Հայքի 4-րդ գաւառը, այժմեան
Երզնկայի շրջանը՝ յունարէն՝ Ἀρλίσση, լատ.
Acliseneae: Այս գաւառը կոչու. էլ է նաև Անահ-
տական (յունարէն՝ Ἀνατὸς Χώρα), երկա կամ
երգ (այժմ՝ երզնկա) առանում գտնուող Անահ-
իւրի հռչակաւոր տաճարի առանձնով: Անտիկ
հեղինակների Ալկիսենեն ընդգրկում էր նաև
Դարանաղի գաւառը: Այս գաւառումն էին,
բացի Երզնկայից, Մուսիւս (Մուսե, Ջիւսիւ) քա-
ղաքը և Թիլի աւանը: Եկեղեցու գաւառի տա-
րածութիւնն է շուրջ 2250 քառակուսի կիլո-
մետր: Տես Ա. Տերման, Հայաստանը, էջ 51:

⁶⁵ Այժմ էլ նոյն անունով գիւղը՝ նայն
տեղում, էջ 53:

⁶⁶ M. van Esbroeck, Le résumé, pp. 356-357.

առաւում, որ Գրիգոր Լուսաւորիչը փաստորէն եղել է Թադէոս առաքեալի գործի շարունակողն ու ամուր հիմքերի վրայ դնողը:

Հետաքրքրական է, որ Ասորի, Յակոբկեան Եկեղեցու նշանաւոր պատրիարքներից՝ Միքայէլ Ասորի (1168-1199 թթ.) իր ժամանակագրութեան մէջ վկայում է. որ քորոզելու համար Հայաստան է եկել Աղգառ առաքեալի աշակերտ՝ Ագգան. ահա թէ ինչ է գրել նա. «Ագգան քորոզեց Բէյթ Մոփանէյում (Մոփքում), Բէյթ Աղգանէյում (Արղնում)»⁶¹ և Արաաքին (Ուրարիտա) Հայաստանում. հետագայում նրա աղգրերը ջախջախեցին և նա վախճանուեց»⁶²:

Նոյն պատժիչը, որը իր ժամանակի շառագոյտնի եկեղեցական գործիչներից ու զարգացած անձնաւորութիւններից էր և եկեղեցական միութիւնը վերահաստատելու նպատակով, ինչպէս յետոյ կը տեսնենք, բանակցութիւններ մէջ է եղել Հայոց կաթողիկոսի ու Բիւզանդական կայսրի հետ, վկայում է նաեւ, որ Հայաստանում քորոզել է Բարթողիմէոս առաքելը. ահա նրա վկայութիւնը. «Բարթողիմէոսը Ղանդոր»⁶³ գիւղից էր: Նա երեք տարուայ ընթացքում քորոզեց Հայաստանում, ապա Հերոստու»⁶⁴ Թա-

գաւորը նրան խաչել տուեց. նրան Թադեոսն այն եկեղեցում, որը նա կառուցել էր այս վայրում»⁶⁵:

Մինչ Բարթողիմէոս առաքեալին անցնել ժանթանսնոք նաև ասորական վաղագոյն շրջանին պատկանող աղբիւրներից «Վարդապետութիւն Առաքելոցն աշնունով մեզ հասած մի աշխատութեան»⁶⁶, Այն զեռ շատ վաղ դարերից որպէս «առաքելական կանոններ» մի հաւաքածոյ, Գրիգորանէական Եկեղեցիների մէջ բարձր հնդիսակութիւն է ունեցել և որպէս այդպիսին մտել է կանոն գրքի մէջ: Ահա Գրիգորանէական Եկեղեցու համար նման արժէք ներկայացնող այդ երկում ևս վկայութիւն կայ այն մասին, որ Աղգա կամ Թադէոս առաքեալը և նրա աշակերտ՝ Ագգան ոչ միայն Սեւեհիայում, Հայաստանում, այլ նաև արևելեան բազում երկրներում քորոզել և գործել են. ահա այդ հաստատելի թարգմանութիւնը. «Եւգեսիան ու ամբողջ շրջակայքը, որոնք նրա բաւար (չորս) կողմերում են, և Մոփքը, և Ղարորը (Արվաստան՝ Մծբինը իր շրջակայքով), և Միջագետքի սահմանների վրայ գտնուող բաւար երկրները քանանայական ձեռնադրութեան (կադակոպոսութեան) իրաւունքը ստացան Աղգա առաքեալից, որը եօթանասուներկու առաքեալներից մէկն էր»⁶⁷: Այստեղ Ագգան ներկայացուած է որպէս ամբողջ Արևելքի առաքեալը: Իսկ շարունակութեան մէջ հետեւալն ենք կարդում. «Պարոկաստանը, ամբողջ Աթուրիան (Ասորիստանը), Հայաստանը, Մեդիան և Բարելոնի չորսը կողմ երկրները՝ Խուժաստանը (Beit Huza-ye), Գիլանը մինչև հնդկիկների սահմանները, և նոյնիսկ Գոգ և Մագոգ երկիրն ու նրա շրջակայքը, (քանանայական ձեռնադրութեան իրաւունքը՝ կադակոպոսութիւնը) Աղգա առաքեալի աշակերտ՝ խոյրաբար Ագգայից են ստացել»⁶⁸:

⁶¹ Մէլանեաց բղիշխութեան առաջին դաւառը, 3575 քառ. կլմ. տարածութեամբ: Անտիկ աղբիւրներում յայտնի է իբրեւ (բառք անքրեմեյի) և մէկ անգամ յիշատակում է Եղիշէի մօտ՝ Արգնաղիւն ձեռք: Այս դաւառը սկզբում կոչուել է Արգիթ՝ համանուն Արգան կենտրոնով, այժմ Թարգան կամ Զուլ վայր: Մի այլ տեղ (Աշխարհացոյց, էջ 37), Աղմն դաւառը կոչւում է Աղմնիկ հայոց, որ է Արմն: Այս դաւառը հզուել է հայաւորից գէպի Միշն. աշխարհը տանող ճանապարհը Զորապահակով (կամ Տաւրոյ-բերան, այժմ Բիթլիսի լեռնանցք): Աղմն դաւառը Աղմնից րոլիսիւրեան կիներան էր: Տես Ս. Մելանե, Հայաստ., էջ 34:

⁶² Michel le Syrien, Chronique, t. I, Paris, 1963,

⁶³ Հրէաստանի գիւղերից: [p. 149.

⁶⁴ Ասորական քնադրում այս անունը կարծես սկզբում եղել է շերտուէ, հետագայում ինչ-որ ձեւք աւելացրել է նաև ւո: տառը և այն դարձրել շերտուէս կամ շերտովգէտ, ենթադրելով որ աշխուշտ այն շերտովգէտ աշնունն է: Տես Michel le Syrien, Chronique, t. IV, p. 92: Ասորական այլ քնադրութեամբ այս անունը

գրւում է նաև հետեւեալ ձևերով. «Rustni Hə rostni». տես Budge, The Book of the Bees, p. 106.՝

⁶⁵ Նոյն տեղում:

⁶⁶ W. Cureton, Ancient Syriac Documents, The Doctrine of Apostles, p. 34.

⁶⁷ Նոյն տեղում:

⁶⁸ Նոյն տեղում:

Հետաքրքրական է, որ «Վարդապետություն» Առաքելությունը հայկական հին թարգմանությունների, որը վերնագրում է «Սահմանք և կանոնք զոր եղին աշակերտքն Գրիստոսի եկեղեցւոյ արքայ յեռ վերանայլոյ Տեսուն», համապատասխան հաստատում է հետեւեալն է գրուած. «Թ. ընկալաւ ձեռնադրութիւն քահանայութեան յառաքելոցն Ուրհայ և ամենայն քաղաքն որ շուրջ զնոյմաւ, Մծփին և Արար և սահմանակիցք Միջագետաց, Հայք և ամենայն հիւսիս և հարաւ՝ ի Թագէէ առաքելոյ, որ է մի յերկոտասան առաքելոցն շինեաց անդ եկեղեցի և աշակերտեաց զամենայն կողմանն զայնոսիկ, և կարգեաց ի նոսա քահանայս և պաշտանեայս»:

«Թ. ընկալաւ ձեռնադրութիւն քահանայութեան յառաքելոցն Գարսք և Գարսք և ամենայն Ասորեստան և Խուստան, և ամենայն որ շուրջ զԲաբելոնիս, և Գեղք մինչև ցաւմանս Գդաք, մինչև ցիտդ, և Մագդոգ, և այլ աշխարհք որ շուրջ զկողմաքն զայնոսիկ» յԱղէ կերպասագործէ յաշակերտէ Թագէի առաքելոյ, որ բշկեաց զԱրքար Թագաւոր Ուրհայի»:

Երբ ի մի ենք բերում «Վարդապետություն» Առաքելություն այս վկայութիւնները տեսնում ենք, որ ընդհանուր եզրակացութիւնը այն է, որ արեւելեան բոլոր այս երկրներում քարոզել են, եկեղեցիներ են հիմնել ու եպիսկոպոսական աթոռներ են հաստատել Ադդա կամ Թագէտ առաքելուն ու նրա աշակերտ՝ Ագգան:

Այսպէս ասորական աղբիւրները հաստատում են հայկական աւանդութիւնը, միայն այն տարբերութեամբ, որ Երեմիայի, հասկանալի պատճառներով, առաջնայինի պատիւը իրենց են սեփականացնում: Եղեմիան այդ պատճառն է ձգտել Դ. դարի երկրորդ կէտին, երբ ամբողջ քրիստոնեայ Արեւելքում բարձր հեղինակութիւն էր վայելում: Սակայն այս իրողութիւնը ոչնչով չի արժէքավորում մեզ հասած հայկական աւանդութեան ու մեր վաղ շրջանի պատմիչների՝ Ագաթանգե-

ղոսի, Փաւստոսի ու Մովսէս Խորենացու վկայութիւնները Թագէտ առաքելայի Հայաստանում քարոզելու ու նահատակելու մասին: Այնպէս որ ոչ մի հիմք ունի Հայր Կոզեանի այն յայտարարութիւնը, որ Թագէտ առաքելի Հայաստանում լիւնելու մասին ոչ սուր հեղինակները և ոչ էլ ընդհանրապէս հեղինակները վկայութիւններ են թողել⁷⁶, Գրիի նման մի հարուածով, Հայր Կոզեանը նայն ճակատագրին է արժանացնում նաև Բարթողիմէոս առաքելին. նա գրում է. «Հայ նախնական աւանդութիւն մը ի զուր կը փնտռենք հայ հնագոյն պատմագիրներում: Անոնք ոչինչ գիտեն Բարթողիմէոս առաքելի հայկական առաքելութեան մասին: Ագաթանգեղոս, Բիւզանդ, Փարպեցի, Եղիշէ — այնքան նախանձախնդիր հայ փառքերու ու անծանօթ են փառքին Բարթողիմէոսի քարոզչական գործունէութեան նայոց մէջ»⁷⁷:

Մեզ քաջածանօթ պատճառներով ու գիտակցութեամբ Հայր Կոզեանը անտեսում է մեզ հասած «Վկայաբանութիւն Սրբոյն Բարթողիմէոսի Առաքելոյ» աշխատութիւնը⁷⁸, և չի յիշատակում նաև իրեն համար «ոչ ինչ պատմիչ» Մովսէս Խորենացին, որի հայ փառքի նկատմամբ ունեցած նախանձախնդրութիւնը դժուար թէ մեր պատմաբանը կարողանար կատարել տակ առնել: Մովսէս Խորենացին հաստատել և գրել է. «Բայց վիճակեցաւ հայոց և Բարթողիմէոս առաքել, որ և կատարեցաւ առ մեզ յԱրեւանոս քաղաքի»⁷⁹, Այսինքն Բարթողիմէոսը եղել է Հայաստանում և այնտեղ էլ նահատակուել է: Հայր Կոզեանը ոչ միայն կարեւորութիւն չի տալիս Մովսէս Խորենացու այս վկայութեան, այլև անտեսում է մեզ հասած առաքելի վկայաբանութիւնը, ի վերջոյ Բիւզանդի, Փարպեցու, Եղիշէի լուսութիւնը հիմք չէ անտեսելու օրինակ հայկական աղբիւրներից Բարթողիմէոս առաքելի վախճանը. նրանք լուել են գուցե

76 Ս. Կոզեան, Հայոց եկեղեցիին, էջ 30:

77 Նայն տողում, էջ 22:

78 Ստեփան Կոզեանյան, ԺԺ, 1854, էջ 17:

79 Մովսէս Խորենացու Գատառութիւն Հայոց, Գիրք Բ. գլ. ԼԴ, էջ 158:

75 Կանոնագիրք Հայոց, աշխատք՝ Վ. Յա. Կորեանի, հատար Ա., Երևան, 1964, էջ 62:

նկատի ունենալով այն փաստը, որ տրդէն գրուած կայ այդ մասին, և մեր պատմիչները շատ անգամ խոստովել են գրել մի նիւթի շուրջ երբ իմացել են, որ այդ մասին արդէն ուրիշը գրի է առել, առեալով դէպքում էլ նոյնը կարող էր լինել: Ի վերջոյ երկու աղբիւրների վկայութիւնը միմեք բաւական չէ Հայր կողմանին համոզելու, որ հայկական մի աւանդութիւն, ինչպէս միւս աւանդութիւնները՝ առաքեալների մասին, դոյուլթիւն ունի: Եւ ինչպէս ասանք, բացի հայկականից, այն հաստատում է առօրի եկեղեցական խոշոր գործիչներից ապամիւնիւրից՝ Միքայէլ Առօրին, որը ինչպէս հայկական վկայաբանութիւնը եւ ասում, որ նա նախապատկուել խաչուել է Հայաստանում և թաղուել իր կառուցած եկեղեցում⁸⁰: Եւ եթէ այլ առաքեալներից շատերի նախապատկուել կամ մահուան վայրերը յայտնի են, ապա քրիստոնէական գրականութեան մէջ էլ Բարթողիմէոս առաքեալի գերեզմանը մասնանշուում է Հայաստանում: Ճիշտ է Եւսեբիոս կեսարացիի տեղեկութիւններ է տալիս նրա Հնդկաստան գնալու, բայց ոչինչ չի ասում նրա այնտեղ թաղուած լինելու մասին, որովհետեւ երբ նրանից շատ տարիներ յետոյ մի այլ քրիստոնէայի քառադիւ գնում է այդ երկիրը, այնտեղ գտնում է Բարթողիմէոս առաքեալի տարած Մաթթէոսի Աւետարանի երբայերէն մի օրինակը միայն, և եթէ նրա գերեզմանը եւ այնտեղ լինէր, անպայման կը յիշատակէր: Եւսեբիոսի վերոյիշեալ հաստատութիւնը. «Ձիւ էին գեա եւ ի մամանակին յայնմիկ բազում աւետարանիչք բանին Աստուծոյ, որք ըստ առաւանձային նախանձու գառաքելոց բերելով յանձիւ գնմանութիւն, յանուսն է ի չիսուած բանին Աստուծոյ փութային, յորոց էր և Պանտենոս զոր և մինչև ի նդիկս հասելու և անդ գտեալ գաւառաբան Մաթթէի առ հաւատացեալս ամանս, զոր մինչև երթեալ Պանտենոս անդր՝ քարոզելով նոցա յառաջագոյն Բարթողիմէոսի՝ միայ

նիկու տասանիցն, և երբայական գրով առ նոսա թողեալ, որ և ցայն վայր անկորուստ էր պահեալ»⁸¹:

Եւ եթէ Եւսեբիոսը ոչինչ չի ասում առաքեալի Հայաստանում լինելու մասին, դա հակառակը չի նշանակում, որովհետեւ պատմիչը կարող էր այդ չիմանալ և բացի այդ, նա գրել է հիմնականում Պանտենոսի մասին, և Բարթողիմէոսին յիշատակում է ի միջի այլոց: Յամենայն դէպս նա այնտեղ քարոզել և երբայերէն Աւետարանը թողել ու վերադարձել է: Թէ՛ մեր վերադարձել, այդ մենք իմանում ենք գրի աղբիւրներում պահուած վկայութիւնից, և փաստորէն վերադարձից յետոյ նրա ծաւալած գործունէութեան ու ամբողջ կեանքի մասին, մինչև իր մահը տեղեկութիւններ է տալիս մեզ յայտնի վկայաբանութիւնը, և այս իրադրութիւնը ուրախացնելու, և այդ վկայաբանութեան եղակի արժէքը բարձրացնելու փոխարէն, Հայր կողմանը իր ուժերը չի խնայում հայկական այդ փաստաթուղթը արժէքադրկող առեալների գանելու համար: Միթէ՞ աղբիւրի հայկական լինելը քացասական երեւոյթ կարելի է համարել և այդ հիմք ընդունել ու մերժել, երբ մանաւանդ առաքեալի աճիւնը գրեթե շարունակ հայ հաւատացեալների համար ուխտավայր ու պաշտամունքի աւարկայ չէ դարձել: Կարող են ինչ որ մանրամասնութիւնները ոչ ճիշտ կամ չափազանցուած լինել, բայց դա չի նշանակում ամբողջ աւանդութիւնը մի կողմ անել, երբ մանաւանդ պատմական այդ վկայութիւնները ներքոյ այլ աղբիւրներ գոյութիւն չունեն: Հայկական այդ վկայութեան համաձայն, Հնդկաստանից դաւալոց յետոյ առաքեալը լինում է Բարաւյում, Գերմանիկում և ապա զննացեալ անտի օրբոյն հասն յերկիրն Պարթևաց, և Մարաշ, և Եղիմացուց, և քարոզէր նոցա զբանն կենաց»⁸²: Այս երկրներում լինելուց յետոյ զանցեալ գնաց ի Գողթն գաւառ Հայոց, և փութացաւ հասանել ի վիճակ Թադէոսի ըստ հրամանի Հոգւոյն

80 Michel le Syrien, Chronique, t. I, p. 148. Վկայաբանութիւն Սրբոյն Բարդուղիմէոսի, էջ 80:

81 Եւսեբիոսի կեսարացւոյ եկեղեցական Պատմութիւն, Գլուխ Եւ. գլ. Գ. էջ 364:

82 Վկայաբանութիւն, էջ 22:

Սրբոյ՝ Այստեղ էլ երկու առաքեալները՝ Թադէոսը և Բարթողիմէոսը հանազիպում են իրար: Այս հանդիպումը ես պատմական երեսոյթ է և կարծում ենք, որ պատմականութեան արդիւնք չէ: Մեր սաստնասիրութեան նախորդ էջէ բռն է նշել ենք, որ երկու հոգի կայսրութիւններէ միջև կայացուած փոխադարձ համաձայնութեամբ երկու կողմի առևտրական քարաւանները արեւելեան երկրորդներում ճանապարհորդելիս⁸³ իրաւունք ունէին Հայաստանում իրար հանդիպելու և այնտեղ էլ իրենց ապրանքները վաճառելու և կամ առևտրական գործարքները կնքելու: Արեւելեան այս երկրներում քարոզելիս առ ճանապարհորդելիս Բարթողիմէոս առաքեալն էլ գալիս է Հայաստան և երբ իմանում է, որ այնտեղ է նաև Թադէոս առաքեալը, հանդիպում են: Իսկուպէս էլ ընկնել սուրբ առաքեալն ի բլուր Արտաշու, հանդիպեցաւ այլ ամեն յիշատակներէն Յուդա Սահորեան, և կանգնեցին ի տեղւոյն սուր պատահեցաւ միմեանց զնշան տէրունական խաչին, և հրաժարեցին ի միմեանց մեծաւ ուրախութեամբ⁸⁴: Այդտեղից էլ Բարթողիմէոսը անցնում է դէպի Պարսկաստանի գահմանը եղող հայկական Հնդ և Զարեանը⁸⁵ գաւառները⁸⁶, եւ զնաւ Հայոց Ուրբիանոս քաղաքը և այնտեղ էլ նստասկանւմ է⁸⁷:

ՀԱՅԿ ՄԵԼՔՈՆԵԱՆ

(Մնացեալը յաջորդել)

83 Վկայաբանութիւն, էջ 24:

84 Առարկան բաղում ազրիւրներում Վաղայի վարդապետութիւնը, Վաղարշի Ծղեղեցու Պատմութիւն և այլ վարդերում, առաջնութիւններ կան այն մասին, որ Բիւրատոսի առաքեալները, նրանց աշակերտները սկզբնական շրջանում ճանապարհորդում էին առևտրական քարաւանների հետ միասին: Տես սրբնայն, Ն. Միլինեան, Առարկան Աղբիւրներ,

85 Վկայաբանութիւն, էջ 25: [էջ 47:

86 Առաջին Վարդապետայքի Ծրդ Գաւառը՝ (այժմ իոյ): Իսկ միւսը՝ Վարդականայքի Ծրդ Գաւառը (այժմեան Զեյթունի մարզի Գիւղի շրջափակում): Տես Ս. Յրման, Հայաստանը,

87 Վկայաբանութիւն, էջ 25: [էջ 51, 63:

88 Նոյն տեղում, էջ 26:

ԳՐԱԴՍԱԿԱՆ

Պաշտօնաթերթիս էջերուն մէջ, ներկայ համարէն սկսեալ, արձագանգ պիտի գտնեն խմբագրութեանս եւ Կիւլպէնկեան Մատենադարանին նուիրուած այն հատորները, որոնց հեղինակները Հայ Գրականութեան սպասը ընելու յաւակութեամբ է որ գրիչ են բռնած: Զորք են մեր նպատակները, քաջալեր հանդիսանալ նորելուկ մեր գրողներէն անոնց՝ որոնք գէթ խոստումը ունին որոշ բարձունքի մը հասնելու, եւ սրիչ ընթերցանութեան ախորժակը արտասահմանի մեր երիտասարդութեան, որուն մօտ կրօնական զգացումի ու հաւատքի գաղղութեան թոյլն ի վեր կը ծաւալի անտարբերութիւն մը հանդէպ հայ գրքին:

ԽՄԲ.

“ՊԱՆԴԻՒՅՏԻ ՍՈՐՍՈՔՆԵՐ”

“ՎՇՏԱՄԱՏԵԱՆ”

Հեղինակ՝ ԿԱՐՈ ՄԵԽԹԱՐ

Նոր անուն մը չէ կարօ Միխիթար (բուն անունով Մարտիրոս Ս. Թաճեան)՝ օգիւլաքանայ գրականութեան մէջ: 1946ին հրատարակած էր «Զրկուածները» խորագրուած հատոր մը (գծախառնարար մեղի կարելի չեղաւ զայն ունենալ ձեռքի տակ) և անկէ առաջ ու ետք բերած է իր հոմեոսոս տշխատակցութիւնը արտաստմանեան մեր մամուլին: Այժմ, իր կեանքի մայրամուտին, ջանքն ու փոյթը ունեցած է մէկտեղելու երկար իր տարիներու ընթացքին թերթերու մէջ ցրուած արձակ և չափածոյ իր գրութիւնները և լոյս ընծայելու զանոնք երկու հատորներով:

Յիշատակայ գրողին երկերը լոյս տեսած են Պէյրութ, առաջինը 1979ին և երկրորդը 1981ին:

Առաջինը, 182 էջերու մէջ, կը պահարանակէ ստանաւորները ալեւոր հեղինակին (կը զգուշանանք լեզբուած բառին գործածութիւնէն, որ աւելի թէքնիկ, կատարելագործուած արուեստի մը հեռանկարը կը բանաջ ընթերցողի մտահորիզոնին): Ընդհանրապէս առանց յանգի,